Հավելված 1՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2022 թվականի
սեպտեմբերի 15-ի
N 162-Ա որոշման

«Աուտիզմ և այլ խնդիրներ ունեցող երեխաների ինքնասպասարկում, սոցիալականացում և կյանքի հմտությունների զարգացում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը						
Ծրագրի անմիջական նպատակ	Նպաստել աուտիզմ և հատուկ կարիքներ ունեցող երեխաների ինքնասպասարկման, սոցիալականացման և կյանքի հմտությունների զարգացմանը՝ շեշտադրելով ընտանիքի դերը						
	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		25	30	30	30	30	30
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Ծառայությունները մատուցվում են հմուտ մասնագետների կողմից						
	Սենյակների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	4	4	4	4	4
	2. Ծառայությունների մատուցմանը ներգրավված են շահագրգիռ այլ կառույցներ						
	Կառույնցների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	4	5	5	5	7
Ծրագրի հիմնական գործողությունները	✓ Կարիք ունեցող երեխաների քարտեզագրում/ ծառայություններից դուրս մնացած/ ✓ Ոլորտային մասնագետներից ձևավորել մասնագիտական կամավորական խմբեր ✓ Առկա տեղական և միջազգային փորձի ուսումնասիրության հիմքի վրա Գյուրիի մոդելի ստեղծում ✓ Ծառայության մատուցում/ Գործընկեր՝ ՎՎ, կառույցին պատկանող հարմարեցված տարածքում/ ✓ Արդյունքների գնահատում, հաշվետվության ներկայացում						

Ծրագրի բյուջեն	10 մլն դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Վերապատրաստված մասնագետներ, տրասնպորտային հասանելիության ապահովում
Ծրագրի հիմնական ռիսկերը	Չեն ցանկանա վերասպստրաստվել, վերապատրաստվելուց/սովորելուց հետո չվերադառնալ՝ համայնքում աշխատելու համար:
Ծրագրի հիմնական շահառուները	Աուտիզմով և այլ հատուկ կարիքներով երեխաներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021-2026
Ծրագրի համառոտ նկարագրություն	Գյումրի համայնքում աուտիզմ և հաշմանդամություն ունեցող երեխաների համար մատուցվող ծառայությունների վիճակագրությունը ցույց է տալիս, որ նման ծառայությունները զգալի ազդեցություն ունեն երեխաների և նրանց ընտանիքի անդամների կյանքի որակի բարելավման վրա: Ցավոք, Գյումրիում նման ծառայություններից օգտվում են սահմանափակ քանակով երեխաներ՝ հաշվի առնելով ներկա ծառայության մատուցման համար հատկացված գույքային, շենքային պայմանները, ինչպես նաև մասնագետների բացակայությունը: Տվյալ ծրագիրը միտված է ավելացնել ծառայությունների մատուցման քանակը և աշխարհագրությունը՝ ծառայության մեջ ներառելով նաև հարակից բնակավայրերի երեխաներին: Ծրագրի հիմնական շեշտադրումը համագործակցության ստեղծումն է՝ ռեսուրսների մոբիլիզացման և արդյունավետության բարձրացման նպատակով, ինչպես նաև մասնագետների վերապատրաստումը:

Հավելված 2՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2022 թվականի
սեպտեմբերի 15-ի
N 162-Ա որոշման

« Մատչելի նախադպրոցական ուսումնական հաստատություններ համայնքի բոլոր երեխաների համար»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը						
Ծրագրի անմիջական նպատակ	Նպաստել Գյումրի համայնքի 0-6 տարեկան երեխաների սոցիալականացմանը նախադպրոցական կրթության հասանելիությանն ու մատչելիությանը՝ խթանելով ծնողների զբաղվածությունը:						
	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		2100	90	90	90	90	90
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Ծառայություններից օգտվող երեխաներ						
	Ծառայության ծածկույթը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		27%	50%	50%	55%	80%	80%
	2. Հարմարեցված խմբեր (երկարօրյա) աշխատող ծնողների համար						
	Խմբերի թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	3	4	4	4	7
Ծրագրի հիմնական գործողությունները	✓ Մանկապարտեզներում լրացուցիչ խմբերի թվի ավելացում/ որտեղ տարածքը թույլ է տալիս/ ✓ Շենքային պայմանների հարմարեցում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին/շարժական թեքահարթակների ձեռքբերում, տեղադրում/ ✓ Մանկապարտեզների նյութատեխնիկական բազայի վերազինում/ արտթերապիայի նյութեր, դիդակտիկ պարագաներ և այլն/ ✓ Ծառայությունների ընդլայնում՝ հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար ևս						

	✓ Ճկուն զեղչային համակարգի կիրառում՝ ընտանիքի կարիքից ելնելով ✓ Լրացուցիչ ժամանակահատվածով՝ 17:00-ից հետո երեխաների խմբերի ձևավորում /աշխատող ծնողների երեխաների համար/ ✓ Ժամը 17:00-ից հետո երեխաների հետ աշխատող մասնագետներ
Ծրագրի բյուջեն	12 մլն դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Շենքային պայմաններ, գույք, պարագաներ
Ծրագրի հիմնական ռիսկերը	Աշխատող ծնողների գրաֆիկի հետ հարմարեցում
Ծրագրի հիմնական շահառուները	0-6 տարեկան երեխաներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021-2026
Ծրագրի համառոտ նկարագրություն	Գյումրիում գործում է 24 մանկապարտեզ, 10-ը՝ 2-6 տարեկան, 14-ը՝ 3-6 տարեկան երեխաների համար: Մանկապարտեզներ է հաճախում 2100 երեխա: Մանկապարտեզներն աշխատում են 09:00-17:00-ն: Վարձավճարը 8000 (ութ հազար) դրամ է, կիրառվում են զեղչեր: Կան մանկապարտեզներ, որոնք ունեն ջեռուցման խնդիրներ: Մսուրային տարիքի երախաների համար մանկապարտեզներն ավելի անհասանելի են: Մանկապարտեզների զերծանրաբեռնվածության պատճառով 0-6 տարեկան թվով 5600 երեխա դուրս է մնում նախակրթությունից: Չնայած համայնքում գործում են նաև մասնավոր մանկապարտեզներ, որոնց վարձավճարը անհամեմատ բարձր է, այնուամենայնիվ, ոչ բոլորին են հասանելի և ստուգված չէ նրանց կողմից մատուցվող ծառայության որակը: Մանկապարտեզ չհաճախելու հետևանքով դեպի դպրոց անցումը խնդրահարույց և բարդ է: Հատուկ կարիքներ ունեցող երեխաները դուրս են մնում նախակրթությունից:

Հավելված 3՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2022 թվականի
սեպտեմբերի 15-ի
N 162-Ա որոշման

« Հավասար հնարավորություններ-հասանելի հանրային տրանսպորտ»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը						
Ծրագրի անմիջական նպատակ	Նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց համար ճանապարհային երթևեկության հասանելիության ապահովմանը՝ հետիոտների անցումային հատվածներում տեղադրելով հատուկ հարմարեցված ձայնային ազդանշաններով լուսակիրներ, տրանսպորտում տեղադրելով հատուկ ձայնային և տեսողական սարքավորումներ:						
	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		1200	5000	5000	6000	6000	6000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված տրանսպորտային միջոցներ						
	Ձայնային ազդանշաններով լուսակիրներ, տրանսպորտում տեղադրվող հատուկ ձայնային և տեսողական սարքավորումների քանակ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	10	20	25	25	25
	2. Հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված անցումներ և կանգառներ						
	Խմբերի թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	10	20	25	25	25
Ծրագրի հիմնական	✓ Ձայնային, տեսողական համապատասխան սարքավորումների ձեռքբերում և տեղադրում հանրային տրանսպորտում						

գործողությունները	✓ Հաշմանդամություն ունեցող անձանց իրազեկվածության բարձրացում՝ հանրային տրանսպորտի հասանելիության և դրանից օգտվելու կանոնների վերաբերյալ ✓ Բանուկ և գլխավոր փողոցների խաչմերուկներում տեղադրել ձայնային լուսացույցներ ✓ Հատուկ կարիքներ ունեցող մարդկանց համար կիրառել ճկուն զեղչային համակարգ հանրային տրանսպորտից օգտվելիս
Ծրագրի բյուջեն	8 մլն դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ձայնային, տեսողական համապատասխան սարքավորումներ
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ծառայությունների մատուցում մասնավոր ընկերությունների կողմից
Ծրագրի հիմնական շահառուները	Հաշմանդամություն ունեցող անձինք
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021-2026
Ծրագրի համառոտ նկարագրություն	Շիրակի մարզում ապրում է 18 934 հաշմանդամություն ունեցող մարդ, որոնց թվում են հենաշարժողական համակարգի խնդիրներով, տեսողական և լսողական խնդիրներով անձինք: Նրանք չեն կարողանում համայնքում տեղաշարժվել, օգտվել հանրային տրանսպորտից, քանի որ վերջիններս հարմարեցված չեն: Աստիճանաբար մեկուսանում են, փակվում են տներում: Ծրագրի շրջանակում նախատեսվում է հարմարեցնել թե՛ տրանսպորտային միջոցները, թե՛ անցումները և կանգառները՝ հնարավորինս մատչելի դարձնելով դրանք հատուկ կարիքներ ունեցող անձանց համար: Մասնավորապես՝ նախատեսվում է անցումները կահավորել ձայնային ազդանշաններով, ինչը հնարավորություն կտա տեսողական խնդիրներ ունեցող անձանց հեշտ կողմնորոշվել և անվտանգ անցնել ճանապարհը:

Հավելված 4՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2022 թվականի
սեպտեմբերի 15-ի
N 162-Ա որոշման

« ՀԿ-ների հետ արդյունավետ համագործակցություն»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը						
Ծրագրի անմիջական նպատակ	Նպաստել համայնքի բնակչությանը՝ ստանալու կարիքից բխող սոցիալական ծառայություններ՝ օգտագործելով համայնքում գործող ՀԿ-ների ներուժը՝ նրանց սոցիալական ծառայությունների պատվիրակման միջոցով:						
	Սոցիալական համագործակցության ցանցում ներգրավված ՀԿ-ների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	5	5	5	5	5
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. ՀԿ-ները մատուցում են սոցիալական ծառայություններ						
	Սոցիալական ծառայություններ մատուցող ՀԿ-ների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	3	3	3	3	3
	2. ՀԿ-ներին պատվիրակված են սոցիալական ծառայություններ						
	ՀԿ-ների կողմից մատուցվող ծառայություններ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	10	20	25	25	25
Ծրագրի հիմնական գործողությունները	✓ Գործող սոցիալական աշխատողի ծառայություններ մատուցող ՀԿ-ների քարտեզագրում և ներուժի գնահատում՝ ծրագրի մասնակից դառնալու նպատակով ✓ Ոլորտով հետաքրքրված կառույցների հետ հանդիպումներ, գործողությունների համաձայնեցում ✓ Միջգերատեսչական խմբի կողմից ծրագրի ստեղծման նախնական փուլում կոորդինացման աշխատանքերի իրականացում ✓ Աշխատանքերի իրականացման բոլոր փուլերի համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակում և համայնքի կողմից վավերացում ✓ Ամենամսյա հանդիպումների կազմակերպում՝ դեպքերի քննարկման և փոխանցման նպատակով						

	✓ Միասնական տվյալների բազայի ստեղծում
Ծրագրի բյուջեն	8 մլն դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ակտիվ ՔՀԿ-ներ
Ծրագրի հիմնական ռիսկերը	ՔՀԿ-ՏԻՄ համագործակցության փորձի պակաս
Ծրագրի հիմնական շահառուները	Քաղաքացիական հասարակության սուբյեկտներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021-2026
Ծրագրի համառոտ նկարագրություն	Գյումրի համայնքում չի օգտագործվում սոցիալական ոլորտի ՀԿ-ների մասնագիտական ներուժը բնակչությանը մատուցվող ծառայությունների համար, մինչդեռ ներկայումս Գյումրիում գործում են հասարակական կազմակերպություններ, որոնք սոցիալական ծառայություններ են մատուցում ազգաբնակչությանը: Սոցիալական բնագավառում աշխատանքների կոորդինացման, համատեղ նախաձեռնությունների հավելյալ արժեքի ստեղծման, ծառայությունների արդյունավետության բարձրացման համար համայնքապետարանն անհրաժեշտություն է տեսնում ակտիվ համագործակցել ՀԿ-ների հետ՝ այդ համագործակցությանը տալով ինստիտուցիոնալ բնույթ: Տեղեկատվության, փորձի փոխանակման, ինչպես նաև ռեսուրսների մոբիլիզացիայի շնորհիվ հնարավոր կլինի բարելավել սոցիալական ծառայությունների որակը՝ ավելի հասանելի դարձնելով բնակչությանը: